ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/56» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով սպորտային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1

«12» մարտի - «25» մարտի 2024 թ.,
ժամը 11:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝
Վ. Ավագիմյանց՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),
հանձնաժողովի անդամներ՝
Ն. Ղուկասյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
Հ. Թումանյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Ավագյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. **Տեղեկատվություն՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/56» ծածկագրով ընթացակարգի շրջանակում** ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի՝ էլեկտրոնային աճուրդների համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2024թ-ի մարտի 12-ին, ժամը 11:00-ին:

Գնման ընթացակարգի աճուրդը մեկնարկել է 2024թ-ի մարտի 13-ին, ժամը 11:00, ավարտվել՝ մարտի 13-ին ժամը 11:32-ին:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Էլ. հասցե, հեռ.
1	Սիթի Սպորտ ՍՊԸ	Ք. Երևան 17փ.,1 տան մոտ 091-40-56-40 leadersport@bk.ru
2	Քանան Ընդ Յան ՍՊԸ	Ք. Երևան, Նար-Դոս 77/70 Kananyan01@mail.ru 091-01-11-02

3. Տեղեկատվություն յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին.

Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդում մասնակիցները ներկայացրել են հետևյալ վերջնական գնային առաջարկները.

Չափաբաժնի համար	Անվանումը	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
					Արժեք	ԱԱՀ	Գին	
1	Պոմպ	1	Սիթի Սպորտ ՍՊԸ	100000	70000	0 %	70000	
		2	Քանան Ընդ Յան ՍՊԸ	100000	87000	0 %	87000	

2	Պնևմատիկ հրացանների ունիվերսալ փամփուշտներ	1	Քանան Ընդ Յան ՍՊԸ	392000	388080	0 %	388080	
3	Սեղանի թենիսի ցանց, մետաղական ամրակներով	1	Միթի Սպորտ ՍՊԸ	100000	60000	0 %	60000	
		1	Քանան Ընդ Յան ՍՊԸ	100000	81000	0 %	81000	

4. Տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն եղել:

6. Տեղեկատվություն հակադարձ աճուրդի արդյունքում յուրաքանչյուր չափաբաժնի մասով, ընտրված մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Ընտրված մասնակից՝ Միթի Սպորտ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերից բացակայում էր հավելված 1-ը և հավելված 1.3-ը, ուստի վերոնշյալ կազմակերպությանը օրենքով սահմանված ժամկետում տրվել է շտկման հնարավորություն, որի արդյունքում կազմակերպությունը շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, իսկ Քանան Ընդ Յան ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Տեղեկատվություն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած /ընտրված/ ճանաչել

N	Մասնակցի անվանում	Չափաբաժնի համար
1	Միթի Սպորտ ՍՊԸ	1,3
2	Քանան Ընդ Յան ՍՊԸ	2

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Տեղեկատվություն գնահատման արդյունքների մասին

8.1 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին՝ 1, 2, 3-րդ չափաբաժինների համար և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ ԷԱՃ-ի կազմակերպման կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝	Վ. Ավագիմյանց	ստորագրություն
Անդամներ՝	Ն. Ղուկասյան	ստորագրություն
	Հ. Թումանյան	ստորագրություն
Քարտուղար՝	Մ. Ավագյան	ստորագրություն